ՀՏԴ 82.091

Ս. ԽԱՆՅԱՆԻ ՉԱՓԱԾՈՅԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Անահիտ Աթայան
բ.գ.թ., պրոֆեսոր
Մեսրոպ Մաշտոց Համալսարան
Արցախ

Անոտացիա

Խանյանի չափածոյի գեղարվեստական առանձնահատկությունների նոր մեկնաբանություն» հոդվածում քննության է առնվում մանկավարժ-բանաստեղծ Մամիկոն Յավրումյանի «Սոկրատ Խանյանի չափածոյի լեզվառճական առանձնահատկությունները» գիրքը: Այն հետաքրքիր ու նոր ներդրում է ոճագիտության բնագավառում: Հեղինակը գրքի երեք գլուխներում քննում-վերլուծում է նշանավոր բանաստեղծ Ս. Խանյանի քսան ժողովածուների բանաստեղծությունները, բացահայտում դրանց լեզվառճական առանձնահատկությունները, մասնավորապես հնչյունային իրողությունների ոճական առանձնահատկությունները, բառապաշարային հարցերը, քնարերգության քերականական իրողությունները: Հեղինակը հավաստում է, որ պարզությունը, պատկերների և համեմատությունների առարկայական կոնկրետությունը Խանյանի ոճի, նրա բանաստեղծական արվեստի ամենակարևոր հատկանիշներն են:

Ուսումնասիրությունը գիտական ու տեսական ընդհանրացում է Ս. Խանյանի պոեզիայի լեզվառճական առանձնահատկությունների մասին և օգտակար կլինի ոճաբանությամբ զբաղվողների համար:

Բանալի բառեր՝ *Լեզու և ոճ, ինքնատիպ գրելաոճ, գեղարվեստական երկ, գրականագիտական հոդվածներ, հնչյունական, բառապաշար, քերականական, ոճական արժեք, քերականական իրողություններ, բանաստեղծական աշխարհ, համեմատություններ, կրկնություններ, մակդիր, այլաբերություն, հռետորական դիմում, բացականչություն, ճարտասանական դիմում, տեսական ընդհանրացում:*

Գրականության մեջ պատկերավորության ձևերի բազմազանությունը պայմանավորված է պատկերի կառուցման տարբեր եղանակների առկայությամբ:

«Ամեն մի գեղարվեստական պատկերի և, ամբողջությամբ վերցրած, գրական երկի ստեղծում պահանջում է գրողի տաղանդի և հոգևոր ունակությունների՝ գիտակցության և զգացմունքների, կամքի և հիշողության, ոգևորության և երևակայության բարձր լարում»,- գրում է Է. Զրբաշյանը:[1]

[1] **Է. Զրբաշյան**, Գրականագիտության ներածություն, Եր., 1996,էջ 47:

Գեղարվեստական լեզուն պետք է լինի խստորեն անհատականացված և ունենա լայն ընդհանրացնող նշանակություն: Որպեսզի բացահայտվի պատկերի զգայական բովանդակությունը, լեզուն պետք է հագեցած լինի հուզական հատկանիշներով: «Բանաստեղծի համար մի բառը մի աշխարհ է» . Թումանյանական միտքը հաստատում է այն երևույթը, որ ամեն մի բառ արտահայտում է գրողի հոգու մի մասնիկը, բխում է նրա առջև դրված գեղարվեստական խնդրից:

Վերջերս հրատարակվել է մանկավարժ- բանասեր Մամիկոն Յավրումյանի «Սոկրատ Խանյանի չափածոյի լեզվառճական առանձնահատկությունները» գիրքը, որի ներածականում կարդում ենք. «Գրական լեզվի ցանկացած ուսումնասիրություն սկսվում է այդ լեզվով ստեղծագործող տաղանդավոր գրողների լեզվական արվեստի բացահայտումից և կատարյալ չէ առանց այդ անհատների խոսքարվեստի ուսումնասիրության»[1] : Այս հստակ համոզմունքով է ստեղծվել Ս.Խանյանի պոեզիայի լեզվառճական առանձնահատկությունների ուսումնասիրությանը նվիրված գիրքը՝ հետաքրքիր ու նոր ներդրում ոճագիտության բնագավառում:

Գրաքննադատական տարբեր հոդվածներում ու մենագրություններում բազմիցս խոսվել է քննվող հարցի շուրջ, բայց առայսօր չկար բանաստեղծի չափածոյի լեզվական արվեստին նվիրված ամբողջական ուսումնասիրություն :

Որպես այդպիսին Մամիկոն Յավրումյանի գիրքը նորություն է և բացահայտում է Խանյան բանաստեղծի պոետական աշխարհի լեզվական շերտերը, հեղինակի ինքնատիպ գրելաոճը: Մանավարժ- գրականագետը Ս. Խանյանի բառաշխարհը մեկնաբանել է նրա պոեզիայի ժամանակագրական պատմության համապատկերում, քսան բանաստեղծական ժողովածուների մանրակրկիտ քննության արդյունքում:

Ելնելով գեղարվեստական երկի լեզվի և ոճի առանձնահատկություններից՝ գրքի հեղինակը բացահայտել է հայոց լեզվի ընձեռած հնարավորություններից բանաստեղծի օգտվելու ճևերը, գրական լեզվի, բարբառների, օտար փոխառությունների նկամամբ նրա վերաբերմունքը՝ բացահայտելով գրականության ու գրական լեզվի զարգացման մեջ ունեցած ներդրումը: Հեղինակը հավաստում է այն իրողությունը, որ Ս. Խանյանը ոչ միայն օգտագործում է գրական լեզվի բառերի բազմիմաստությունը, այլև ինքն է նոր իմաստներ հաղորդում բառին, ինքն է ստեղծում տվյալ բառի նոր կիրառությունը:

Միանգամայն ճիշտ է Ալ. Շիրվանզադեն . «Լեզուն ընդհանուր երևույթ է, ոճը՝ մասնավոր»:[2]

Տեղին է ասված՝ ոճը ինքը մարդն է: Գրողի հաջողությունը հենց ինքնուրույն ոճով ճանաչվելն է: Մ. Յավրումյանը առաջին անգամ բացահայտում է ճանաչված բանաստեղծի խոսքարվեստի ինքնատիպությունն ու գեղարվեստական մակարդակը: Մինչայսօր եղած գրականագիտական հոդվածներում բանաստեղծի լեզվի և ոճի մասին եղել էն դրական կարծիքներ, բայց երբեմն դրանք արտաքին տպավորությունից այն կողմ չեին անցնում; Այլ է Մ. Յավրումյանի ուսուկնասիրությունը: Խանյանի բանաստեղծական ժողովածուների զանազան հրատարակությունների ժամանակագրական քննությունը, համեմատությունը բացահայտում է բանաստեղծի պարզ ու անկաշկանդ ոճը, ավելորդ խճողումից խուսափելը, գեղեցիկ բառերի կուտակումից հրաժարվելը: Խանյան բանաստեղծը ազգային լեզվից օգտվում է

---

[1] **Մ. Յավրումյան**, Սոկրատ Խանյանի չափածոյի լեզվառճական առանձնահատկությունները, Ստեփ., 2018, էջ 5:

[2] **Ալ. Շիրվանզադե**, հատոր 9, Եր., 1955, էջ 186-187:

ստեղծագործաբար ու երբեք չի կաշկանդվում դպրոցական նորմատիվ քերականության հնացած ձևերով:

- Ով հարուստ ոճ ունի, նա և հարուստ կանոններ է պահանջում, իսկ քերականությունն իբրև ձև կարող է կաշկանդել նրան: Պետք է միայն հավատարիմ մնալ հայոց լեզվի ընդհանուր ոգուն, - գրում է Ալ. Շիրվանզադեն[1]:

Մամիկոն Յավրումյանը առաջին անգամ փորձել է ուսումնասիրել և արժևորել Ի. Խանյանի ստեղծագործությունների լեզվաոճական առանձնահատկությունների ամբողջական համակարգը՝ և հնչյունական, և բառապաշարային, և քերականական իրողությունների, և պատկերավորման, արտահայտչական միջոցների ոճական արժեքը, դրանց տեղն ու դերը հայերենի զարգացման գործընթացում :

Գրքի առաջին գլուխը նվիրված է հնչյունային իրողությունների ոճական առանձնահատկություններին՝ համոզված որ հնչյունական ոճավորումն ու բանաստեղծության երաժշտականությունը չափածոյի լեզվական արվեստը բնութագրող առանցքային հարցերից են: Բերված համոզիչ օրինակներն ապացուցում են հեղինակի՝ խոսքը ոճավորելու և գեղարվեստական պատկերն ազդեցիկ ու տպավորիչ դարձնելու անուրանալի ձիրքը: Տեղին ու նպատակային գործածվող բաղաձայնույթն ու առձայնույթը, նմանահունչ բառերի կրկնությունը Խանյանի բանաստեղծական աշխարհին քնարական ու երգեցիկ երանգ են հաղորդում: Այստեղից էլ նրա պոեզիայի բարեհնչունությունն ու ներդաշնակությունը՝ զերծ ավելորդ խճողումներից, տողի ավելորդ ծանրաբեռնումից:

«Բառապաշարային հարցեր» գլխում հեղինակը շեշտում է այն հանգամանքը, որ բառապաշարի հարստությամբ են որոշվում իրականության գեղարվեստական արտացոլման հնարավորությունները: Այս առումով հեղինակը տարբերակում է Խանյանի պոեզիային բնորոշ ընդհանուր հայերեն կամ համագործածական, ժողովրդախոսակցական և բարբառային բառերը, հարադրությունները (իրենց տարատեսակներով), դարձվածքներն ու նորաբանությունները, բառապաշարի իմաստային խմբերի ոճական կիրառությունները՝ հոմանիշներ, հականիշներ, հարանուններ տեսակներով:

Վերլուծելով ու քննելով Խանյանի բանաստեղծական աշխարհում առատորեն սփռված լեզվական նշված իրողությունները՝ հեղինակը բացահայտում է դրանց կիրառական գործառույթները, դերը գրական լեզվի և մասնավորապես բանաստեղծական լեզվի բառապաշարի մեջ: Բերված օրինակներն ապացուցում են Խանյանի բանարվեստի ցայտուն կողմերը՝ խոսքի գունագեղություն, արտահայտչականություն ու պատկերավորություն: Ըստ գրքի հեղինակի՝ իմաստով միմյանցից հեռու բարերը Խանյանի բանաստեղծություններում հոմանիշային արժեք են ստանում ոչ թե բառային, այլ խոսքային մակարդակում և դրանից դուրս հոմանիշային հարաբերություն չեն դրսևորում: Բերված օրինակներում դրանց հոմանիշությունը խոսքային մակարդակում է, և անհատական – հեղինակային է, ու կապված է հեղինակի բանաստեղծական մտածողության և ճաշակի հետ: Խանյանն առատորեն օգտվել է հայերենի հոմանիշների հարուստ գանձարանից, ինչը համոզիչ, տպավորիչ ու գունեղ է դարձնում խոսքը:

Գրքի հեղինակը բանաստեղծի բանարվեստից բերում է նաև հականիշների փոխաբերական գործածությունները, որոնք բացարձակ հականիշներ չեն, բայց այդպիսին դառնում են փոխաբերական գործածությունների շնորհիվ:

[1] Նույն տեղում, էջ 227

- Խանյանի լեզվում յուրաքանչյուր բառ հանդես է գալիս ներգործման մեծ ուժով, ոճական ինքնատիպ արժեքով: Համագործածական, նորաստեղծ, ժողովրդախոսակցական, բարբառային և օտար բառերը հեղինակի խոսքաոավեստում հոգեվիճակի, տրամադրության, հույզի և ապրումի արտացոլման յուրօրինակ միջոցներ են,- ընդհանրացնում է հեղինակը[1]:

Աշխատանքի երրորդ գլուխը վերաբերում է Խանյանի քնարերգության քերականական իրողությունների՝ մասնավորապես ձևաբանական, շարահյուսական, միակազմ նախադասությունների քննությանը՝ դիտարկելով այն երևույթը, որ «օգտվելով քերականության ընձեռած ոճական հնարավորություններից՝ բանաստեղծը ձևաբանական ու շարահյուսական անհրաժեշտ միջոցների ընտրությամբ և դրանց ոճական նրբիմաստների նպատակային կիրառությամբ պատկերավորություն, ներգործություն է հաղորդել իր լեզվին՝ միաժամանակ արտացոլելով գրական հայերենի քերականական օրինաչափությունների կենսունակ միտումները»[2]:

«Պատկերավորման արտահայտչական համակարգը» գլխում սևակյան խոսքերով հեղինակը շեշտում է պատկերավորման դերը բանաստեղծական խոսքում (Ամեն մի իսկական բանաստեղծի ուժը «պատկերավոր մտածելու, աշխարհի իրերին, ամեն ինչին բանաստեղծական տեսանկյունից նայելու մեջ է»):

Գրքի հեղինակը կարևորում է այն հանգամանքը, որ Ս.Խանյանը այն բանաստեղծներից է, ով իր խոսքին թարմություն ու բազմերանգություն հաղորդելու համար, հենվելով նաև դասական քնարերգության պատկերավորման արվեստի լավագույն արժեքների վրա, նոր վերաբերմունք դրսևորեց պատկերավորման միջոցների ընտրության առումով: «Պարզությունը, պատկերների և համեմատությունների առարկայական կոնկրետությունը Խանյանի ոճի, նրա բանաստեղծական արվեստի ամենակարևոր հատկանիշներն են»,. - գրում Մ Յավրումյանը[3], ապա հիմնավոր օրինակներով մեկնաբանում Խանյանի բանաստեղծական աշխարհը՝ բնութագրելով մակդիրի, համեմատության, այլաբերության գործածության սահմանները , արտահայտչական միջոցների ոճական արժեքը, հարցական – բացականչական բնույթի նախադասությունների, տարբեր խոսքային կառույցների դերը խոսքի հուզական շեշտվածության, զգացմունքների ուժող դրսևորման համապատկերում: Առանձին բնութագրումներ են ստանում Խանյանի պոեզիայի հռետորական դիմումները, բացականչությունները՝ որպես ոճական – շարահյուսական դարձույթներ, որոնց կիրառությամբ և բացականչական հարուստ հնչերանգի շնորհիվ խոսքին հաղորդվում է յուրահատուկ զգացմունքային երանգ: Բերված օրինակներն ապացուցում են, որ Խանյան բանաստեղծը «իր տարաբնույթ զգացումներն ու հոգեկան ապրումներն արտահայտելու համար հաճախ է գործածում ճարտասանական դիմումը , որի հասցեատերը առավել հաճախ դառնում են բնության երևույթները և մարդ արարածը» [4]:

Գրքում առանձնակի արժևորվում են Խանյանի պոեզիայում գործածվող կրկնություններն իրենց գործառույթներով, որոնք կազմում են նրա լեզվական արվեստը հատկանշող կարևոր տարրերը:

---

[1] **Մ. Յավրումյան**, Ս. Խանյանի չափածոյի լեզվաոճական առանձնահատկությունները, Ստ., 2018, էջ 45:

[2] **Մ. Յավրումյան**, Ս. Խանյանի չափածոյի լեզվաոճական առանձնահատկությունները, Ստ., 2018, էջ 57:

[3] Նույն տեղում, էջ 59

[4] Նույն տեղում, էջ 82

- Նշված ոճական հնարանքի տպավորությունն ու արժեքը պայմանավորված են կրկնության միավորների ճիշտ ընտրությամբ, ինչը դարձյալ փաստում է ինքնատիպ մտածողի անսպառ երևակայության և յուրահատուկ աշխարհընկալման մասին, - գրում է հեղինակը[1]:

Մ. Յավրումյանը պոեզիան ընկալող ու զգացող մանկավարժի ու գրականագետի հմտությամբ է բացահայտում հակադրության, շրջադասության, շրջուն շարադասության տեսակները: Դիտարկված օրինակները բացահայտում են Խանյան բանաստեղծի կողմից պոեզիայի գեղագիտական խնդիրների լուծման ճանապարհները, պատկերավորության պատշաճ, գեղեցիկ կարողությունը:

Գիրքը նոր, հետաքրքիր փորձ է՝ քննելու պոեզիայի գեղագիտությունը, մասնավորապես՝ Ս. Խանյանի պոետական աշխարհի առանձնահատկությունները, հեղինակի լեզվամտածության ինքնատիպությունը: Հմուտ մանկավարժը ընկալել է բանաստեղծական խոսքի ուժը՝ հոգեկան բարդ ապրումներ ու զգացումներ արտահայտելու, քնարական հերոսի տրամադրություններն ու ապրումները ընդգծելու առումով:

Ընդհանրացնելով իր խոսքը՝ հեղինակը գրում է .

-Ահա բանաստեղծի ստեղծագործության խոսքարվեստի նմանօրինակ մի ուսումնասիրություն, որը կարող է փաստել, որ Խանյանի լեզվամշակույթը առանձնանում է իր յուրօրինակությամբ, իսկ նրա չափածոյի լեզվական փաստերի վրա կարելի է բացահայտել ցանկացած օրինաչափություն[2]: Միանգամայն ճիշտ է հեղինակը.

- Աշխատանքում առկա մոտեցումները, տեսական ընդհանրացումներն ու հիմնավորումները կարող են օգտակար լինել գրողի խոսքարվեստն ուսումնասիրողների, ինչպես նաև ստեղծագործության լեզվի և ոճի հարցերով զբաղվողների համար[3]:

Մ. Յավրումյանը, հիրավի, շնորհակալ գործ է կատարել արդի հայ չափածոյի խոսքարվեստի ուսումնասիրության բնագավառում: Այն ուսանելի ոճագիտական ուսումնասիրություն է, որը կհետաքրքրի բանասիրությամբ զբաղվող ուսանողներին, ուսուցիչներին:

РЕЗЮМЕ

Новые комментарии художественных особенностей поэзии С.Ханяна

Анаит Атаян

Ключевые слова: язык и стиль, художественное произведение, литературоведческие статьи, звуковой, словарный запас, грамматический, стилистические ценности, грамматические реалии, поэтический мир, сравнение, повторение, эпитет, идиома, риторические заявления, восклицание, теоретическое обобщение.

В статье «Новые комментарии художественных особенностей поэзии С.Ханяна», обсуждается книга педагога – филолога Мамикона Яврумяна « Особенности языкового стиля поэзии С. Ханяна». Книга вносит новый интересный вклад в стилистику. Автор в трех главах книги исследует и проводит разбор стихотворений двадцати сборников знаменитого поэта С. Ханяна, раскрывает его стилистические особенности, в частности, стилистические особенности звуковых реалий, вопросы словарного запаса, грамматические реалии в поэзии.

[1] Նույն տեղում, էջ 87:
[2] Նույն տեղում, էջ 87:
[3] Նույն տեղում, էջ 11:

Автор уверяет, что простота, предметная конкретность изображений и сравнений являются главной чертой поэтического искусства и стиля Ханяна.

Исследование является научным и теоретическим обобщением языковых особенностей поэзии Ханяна и будут полезны для тех, кто занимается стилистикой.

SUMMARY

New Comments of Art Features of S. Khanyan's poetry

Anahit Atayan

Key words: language and style, work of art, literary articles, sound stock, lexicon, grammatical, stylistic values, grammatical realities, poetic world, comparison, repetition, epithet, idiom, rhetorical statements, exclamation, theoretical generalization.

In the article "New Comments of Art Features of S. Khanyan's poetry ", the book by the teacher and philologist Mamikon Yavrumyan “Features of language style of the poetry of S. Khanyan” is discussed. The book makes a new interesting contribution to stylistics. In three chapters of the book the author investigates and carries out analysis of poems of twenty collections of the famous poet S. Khanyan, reveals his stylistic features, in particular, stylistic features of sound realities, lexicon questions and grammatical realities in poetry.

The author assures that simplicity, subject concreteness of images and comparisons are the main line of poetic art and Khanyan's style.

The research represents a scientific and theoretical generalization of the language features of poetry of Khanyan and will be useful to those who are engaged in stylistics.